ԳԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (XV – XVIII դդ.)

Ա.Ա.ԽԱՌԱՏՅԱՆ

Հայտնի է, որ պատերազմներն ու ռազմական արշավանքները, այլ ժողովուրդներին նվաճելն ու հարստահարելը կազմել են Օսմանյան կայսրության գոյության հիմքերը: Միջնադարում, մասնավորապես XIV – XVIIIդդ. մշտական պատերազմների հետևանքով ձեռք բերած ռազմավարն ու մարդկային ռեսուրսները այն միջոցներից էին, որոնք մի հայտնի չափով պայմանավորում էին կայսրության նյութական բարեկեցությունը: Պատերազմների շնորհիվ թուրքերի իրականացրած գերեվարությունները, ինչպես և XIVդ. ծայր առած մանկահավաքները (դեվշիրմե) օսմանյան ռազմաավատատիրական ավագանուն հնարավորություն էին տալիս գերիներով համալրել բանակը , չենացնել ամայացած բնակավայրերը և ստանալ կանխիկ շահ (գերեվաճառություն): Գերիների համակարգը դարեր շարունակ իր կնիքը դրեց օսմանյան ռազմական, վարչաբյուրոկրատական ու տնտեսական հարաբերությունների բնույթի վրա:

Ընդհանուր իմաստով, գերիների համակարգը սկիզբ էր առնում և վերարտադրվում երկու հիմնական ուղղություններով՝ պատերազմի միջոցով գերեվարությունների (ռազմագերիներ, պարտված երկրների ազգաբնակչության ստրկացում)և արդեն նվաճված ու կայսրության տարածքում ընդգրկված ոչ մահմեդական ժողովուրդների հաշվին:

Օսմանյան կայսրությունում մեծ չափերի հասնող գերեվարություններն ու ստրկությունը սկիզբ են առնում իբրև սելջուկների ժամանակներից (XIդ.) շարունակվող իրողություններ : 1453թ. գրավելով Կոստանդնուպոլիսը՝ թուրքերը կոտորեցին բնակչության մի մասը, իսկ մյուս մասը՝ 60.000 մարդ, քշվեց գերության": Գրեթե ամբողջովին ամայացած մայրաքաղաքը վերաբնակեցնելու և բանակը համալրելու նպատակով Մեհմեդ II-ը գործի դրեց պարտված ժողովուրդների գերեվարություններն ու տեղահանումները: 4.000 կորնթացի հույների սուլթանը տեղափոխեց Կոստանդնուպոլսի շրջակայք[4]: 1458թ. 40.000 գերի բերվեց Պելոպոնեսից, ապա Բալկաններից[5]: 1459թ. Սերբիայից գերեվարվեց 200.000 մարդ, և պարտված բնակչության տեղահանումներն ու բռնագաղթերը նույն թափով շարունակվեցին 1460 -

---

[1] *I. H. Uzunçarşılı, Osmanlı Devleti Teşkilatindan Kapukulu Ocaklar t. II. Ankara, 1944, s. 265.*

[2] *А.Д.Новичев. Рабство в Османской империи в средние века [Проблемы социальной структуры и идеологии средневекового общества (межвузовский научный сборник), вып. 2, Л., 1978, с. 56].*

[3] *Византийские источники Дука и Франдзи о падении Константинополя (перевод и предисловие А.С.Стеланова), Византийский временник, М., 1953, № 7, с. 387.*

[4] *Kritovoulos, History of the Mehmet the Congueror. Princeton, 1954, p. 136 – 137.*

[5] *А.Д.Новичев, նշվ. աշխ., էջ 66:*

1470-ական թթ. Խորվաթիայից, Կրաինայից, Շտիրիայից, Սլովանիայից և Հունգարիայից:

Գերիները մասամբ բռնի վերաբնակեցվում էին, մասամբ՝ կազմված երիտասարդներից, վերածվում ենիչերիների, իսկ մյուս մասը, իբրև ռազմավար, վաճառվում էր: Ռազմագերիները, ինչպես և դեվշիրմեի պատանիները, որպես կանոն, համալրում էին օսմանյան բանակը՝ մտնելով ենիչերիական և աջեմի զորամասերի մեջ: Ռազմագերիներ հայթայթելու հիմնական տարածքները օսմանյան բանակի համար մնում էին Բալկանները, Մերձավոր արևելքը, ինչպես և Անդրկովկասը: Մանկահավաքի միջոցով Մեհմեդի ժամանակ Կոստանդնուպոլիս բերվեցին Էնկյուրիում բնակվող հայ պատանիները. «Իսկ անաւրէն արքայն տաճկաց, - գրում է հիշատակագիրը,- ժողովեց զքրիստոնէից մանկունսն և եբեր Ըստըմպոլ...» :

Գերիների մի հայտնի չափը բնակեցվում էր գյուղատնտեսական շրջաններում՝ հողագործությամբ զբաղվելու համար: Բալկանյան արշավանքներում ձեռք գցած գերիների իրեն հասանելիք կեսը՝ 4.000 մարդ, ամենայն հավանականությամբ՝ հողագործներ, Մեհմեդ II-ը տեղավորեց Կոստանդնուպոլսի մերձակա գյուղերում՝ նրանց պարտադրելով զբաղվել գյուղատնտեսական արտադրությամբ : Բնակեցվելով խասերի՝ սուլթանական սեփականություն համարվող հողերի վրա, այս, և հնարավոր է, հետագայում նրանց միացած գերիները վերածվել էին այսպես կոչված օրթաքչի-կուլերի (բառացի՝ կիսբար ստրուկներ): 1498թ. Ստամբուլի խասերի մասին հրապարակված օրենքը բավականաչափ փաստեր է ընձեռում այս գերիների կարգավիճակի, նրանց պարտականությունների, բեյությունների (որոնց սահմաններում գտնվում էին խասերը) հետ ունեցած փոխհարաբերությունների և այլնի վերաբերյալ : Օրթաքչի-կուլերը, որոնք քրիստոնյա և հրեա գերիներ էին, լիովին ենթարկված էին հարկադրական աշխատանքի: Իրենց հատկացված հողակտորները նրանք մշակում էին կիսբարության, այսինքն՝ բերքի կեսը բեյությանը տրամադրելու (ուշր և սալարիե հարկի ձևերով) սկզբունքով: Կուլերը կատարելապես իրավազուրկ էին, նրանց ամուսնությունը, աշխատանքը ե ժառանգությունը ամբողջովին տնօրինում էր բեյությունը: Ըստ օրենքի, կուլերը հողը պետք է մշակեին խիստ կանոնարկված պայմաններում՝ որոշակի մշակաբույսեր (ցորեն, գարի, վարսակ) սահմանված հողատարածությամբ և չափերով: Ավելի սերմ ցանելու դեպքում և սերմացուն, և բերքը բռնագրավվում էր ե տրվում բեյությանը, իսկ պակասի դեպքում, միևնույն է, կուլից պետք է գանձվեր այնքան հարկ, որքան սահմանված պայմաններում գործող օրթաքչուց : Բ ղրումն այս անխուսափելի պարտադրանքի, օրթաքչիները անվերապահորեն ամրացված էին հողին. հակառակ ռայայի, որը կարող էր զբաղվել նաև այլ գործով (սիփահուն իր որոշյալ հարկը վճարելու պայմանով), օրթաքչիները պետք է զբաղվեին միայն հողագործությամբ և միայն բեյության համար: «Ամեն մի ստրուկ, - ասված է նշված օրենքում, - որը ձի ձեռք բերելով

---

[6] Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2549, թ. 255:

[7] Дука. Византийская история (Византийский временник, 1953, т. VII, с. 409).

[8] Аграрный строй Османской империи XV-XVII вв. Документы и материалы. М., 1963.

[9] Նույն տեղում, էջ 174 - 175:

զբաղվում է այլ աշխատանքով՝ թողնելով չիֆթի (հողահանդակի - Ա.Խ.) մշակումը, պետք է հայտնաբերվի, նրանից ձին պետք է խլել, իսկ իրեն թող ուղեկցեն բեյությունն՝ պատժելու համար, որպեսզի բացի չիֆթ մշակելուց, այլ գործով չզբաղվի»[10]:

Օրթաքչիների իրավական կարգավիճակը արտացոլում էր ոչ միայն նրանց սոցիալական գործառույթը, այլև այս վերջինից բխող՝ նրանց աշխատանքի չափազանց ցածր արտադրողականությունը, որ լավագույն դեպքում հազիվ կարող էր ապահովել բուն իսկ կուլերի բնական վերարտադրությունը: Նշված օրենքում արդեն ընդգծվում է, որ կուլերի մեծ մասը, շատ չնչին հողակտորներ ունենալով, զրկված է բավարար չափով եկամտից, ուստի և առաջ է քաշվում նրանց հող (ազատ կամ չմշակված) տրամադրելու հարցը: Այս օրենքում ուրվագծվում են այն հիմնական նախադրյալները, որոնք պետք է պայմանավորեին օրթաքչի-կուլերի դասի և նրանց դուզերի վերացումը: Այսպես, արգելվում է կուլի ամուսնությունն ազատի հետ, նրա հեռանայր խասի սահմաններից, որի հետևանքով ծնված երեխաները դառնում էին ազատ, և չէր ապահովվում կուլերի վերարտադրությունը: Կամ՝ ամուսնուն կորցրած կանանց բռնի ամուսնացնում էին նույն խասի ստրկի հետ, որպեսզի և մեկը, և մյուսը չձգտեին ամուսնանալ ազատի հետ՝ խուսափելով իրենց պարտականություններից[11]: Այս և նման օրենքները, սակայն, ի վիճակի չէին կանխելու օրթաքչի-կուլերի ինստիտուտի քայքայումը, որի հիմքում ընկած էր նրանց աշխատանքի ոչ արտադրողական բնույթը: Նույն պատճառով, բեյություններին ևս ձեռնտու չէր օրթաքչի դասի հարատևումը, որի աշխատանքը խասի սահմաններում ամենևին եկամտաբեր չէր: Պակասը լրացրեց իլթիզամի (հարկահանում վարձակալության իրավունքով) համակարգի տարածումը խասերի վրա, որը, Կոչի բեյը համարում էր դրանց քայքայման պատճառներից մեկը[12]: Պետք է եզրակացնել, որ օրթաքչի-կուլերի՝ աշխատանքի մեջ շահագրգռվածության կստարյալ բացակայությունը, մեծ չափերի հասնող նրանց փախուստը կամ հեռանալը խասից՝ ազատ բնակչությանը խառնվելու միջոցով, արեցին իրենց գործը: Փոխարենը, Կոստանդնուպոլսի բնակչության թվաքանակի աճի հետ միասին ընդարձակվել էին ռայաների տնտեսությունները: Էվլիյա Չելեբու ժամանակ Կոստանդնուպոլսի չորս կադիություններում գործում էին շուրջ 57 հազար չիֆթչիներ (երկրագործներ), 43.950 այգեպաններ[13]:

XVI - XVII դդ. թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Հայաստանի կույգ հատվածներից գերեվարվեցին հարյուր հազարավոր հայեր, և այս թվաքանակն իսկ վկայում է հայության անդարձ կորուստների մասին: Գերեվարումը սովորական, ավելի շուտ՝ անհրաժեշտ երևույթ էր

---

[10] Նույն տեղում, էջ 176:

[11] Նույն տեղում, էջ 179 - 181:

[12] Նույն տեղում, էջ 181: Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ.Բ (կազմ. Ա.Խ.Սաֆրաստյան), Ե., 1964, էջ 226: Ա.Դ. Նովիչևը գրում է, որ Կոստանդնուպոլսի սուլթանական խասերում 1530թ. կուլ-օրթաքչիներ այլևս չկային (А.Д.Новичев, նշվ. աշխ., էջ 67), սակայն, պետք է կարծել, որ կուլերի դասը վերացել է ավելի ուշ, նույն դարի վերջին կամ XVIIդ. առաջին քառորդին, որ կարելի է մակաբերել Կոչի բեյի վերոհիշյալ տեղեկություններից:

[13] А.Д.Новичев, նշվ. աշխ., էջ 67:

[14] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 4, Էվլիյա Չելեբի (թարգմ., առաջաբանը և ծանոթ. Ա.Խ.Սաֆրաստյանի), Ե., 1967, էջ 35:

դարձել պատերազմող երկու կողմերի՝ և օսմանցիների, և պարսիկների համար, այն պայմաններում, երբ Հայաստանի տարածքների մի նշանակալի մասը ձեռքից ձեռք էր անցնում: Որպես կանոն, թուրքերի կողմից գերության քշվածների մեծ մասը վաճառվում էր ստրկավաճառ շուկաներում, կրոնափոխվում էր և լուծվում մահմեդական զանգվածի մեջ: 1475թ. Կաֆայի գրավումից հետո գերված հույների, հայերի և ճենովացիների մի մասը վերաբնակեցվեց Կոստանդնուպոլսում, իսկ մյուսները, իբրև ստրուկներ, վաճառվեցին կամ ենիչերի դարձվեցին և կամ էլ ուղարկվեցին հարեմներ: Բոնի տեղահանության ենթարկվածները բնակեցվեցին մայրաքաղաքի առանձին թաղերում հավաք խմբերով, և այս դեպքում ոչ թե գերու, այլ ոչ մահմեդական ռայայի կարգավիճակով: Նկատենք, որ շատ դեպքերում աղբյուրները չեն տարբերում տեղահանվածներին և գերիներին՝ նրանց վիճակը բնութագրելով ընդհանրապես գերության հասկացությամբ: Ընդ որում, աղբյուրները երբեմն ցույց են տալիս, որ գերության քշվածները թվաքանակով շատ անգամ գերազանցել են վերաբնակեցման նպատակով տեղահանվածներին: Տեղահանության համար ընտրում էին գրավված վայրերի արհեստավորներին կամ հողագործներին, որոնց հմտություններն արդեն իսկ արժեք էին ներկայացնում նվաճողների համար[15]: Գ.Այվազովսկին 1475թ. Կաֆայից գերեվարված բնակչության, այդ թվում և հայերի թիվը հաշվում էր 40.000 մարդ[16], սակայն որքան էլ հազարներ կազմեին հայերն այս ընդհանուր թվի մեջ, միևնույն է, նրանց նվազ մասն էր համալրելու Կոստանդնուպոլսի հայ համայնքը: Մնացյալը քշվել էր գերության և վաճառվել կամ համալրել կուլ (ստրուկ) դասը: 1514թ. գրավելով Թավրիզը սուլթան Սելիմը, իր հերթին, մայրաքաղաք էր տեղափոխել 1000 արհեստավորների, որոնց մեջ՝ նաև հայերի[17]: 1579թ. հիշատակագիրը նշում էր, որ թուրքական զորահրամանատար Լալա փաշայի զորքերը «մինչ ... քաղաքս Նախչուանու և այլ գաւառաց աւելի քան քառասուն Ռ (հազար) սնձինք գերեցան»[18]: Նույն այս ժամանակներում Ջաֆեր փաշայի զորքերը գերի են վերցրել Երևանի և մերձակայքի բավական ստվար բնակչություն, նրանց մեջ՝ նաև հայերի: Թուրք պատմագիր Ի.Փեչևին գրում է, թե գերիների այն հարցին, թե արդյո՞ք օրինական է խաղաղ բնակչությանը գերի վերցնելը, մուֆտին իր ֆեթվայով անվերապահորեն հաստատական պատասխան էր տվել[19]: 1581թ. Լա թուրքերը Արարատյան դաշտավայրից գերում են 24.000 մարդ[20]: Նույն կերպ, չի բացառվում, որ 1720-ական թթ. Սյունիքից և Արևելյան Հայաստանի այլ մասերից գերվածների մի մասը, դարձյալ տիրողներին

---

[15] Մեհմեդ II-ն այս դեպքում նախատեսում էր բռնագաղթածների շատ ավելի լայն խավեր, ոչ միայն արհեստավորներ, այլև հողագործներ, վաճառականներ և առհասարակ հարուստ մարդիկ, որոնք օգտագործվելու էին առաջուրը մայրաքաղաքում ծավալելու համար, այլև իրենց նյութական կարողությունները պետք է ի սպաս դնեին նրա կառուցապատմանը (Kritovoulos, նշվ. աշխ., էջ 140):

[16] Գ.Այվազովսկի, Պատմություն օսմանյան պետության, հ. Ա, Վենետիկ, 1841, էջ 198:

[17] Նույն տեղում, էջ 272:

[18] Կարապետ եպիսկոպոս, Նյութեր հայ մելիքության մասին, Բ պրակ, Էջմիածին, 1914, էջ 186 - 187:

[19] Տե՛ս Մ.Կ.Զուլալյան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII-XVIII դդ., գիրք Ա, Ե., 1990, էջ 126 - 127:

[20] Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 6332, էջ 158:

ձեռնտու հատկանիշների շնորհիվ (արհեստներ, մասնագիտական հմտություններ), պահպանած լիներ իր դավանանքը և համալրեր Օսմանյան կայսրության քաղաքների (Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա) հայ համայնքները: Բայց այս դեպքում ևս անհամեմատ մեծ թիվ պետք է կազմած լիներին Կոստանդնուպոլսի շուկայում իբրև գերի վաճառվողները : Շատ ավելի փոքրաթիվ և պարզապես պատահականության բարեհաճությանը արժանացած պետք է լիներին գերեվարությունից հայրենիք վերադարձած և բեկված ճակատագրով մարդիկ: Երևանի Մաշտոցյան Մատենադարանում պահպանվում է մի գրություն՝ նախիջևանցի մի կնոջ մասին, որն ազատվել էր օսմանցիների գերությունից և որի մասին գրում է ոմն Հովսեփ վարդապետ.

«Տէր իմ տէր

Զայս ևս յայտ առնեմ զի կին Նախիջևանցի Ճավահիր կին մի անկեալ ի ձեռ օսմանցոց գերի (անընթ.) մնացեալ է գերութեան մէջ, այժմ քառասուն օրէն յառաջ եկեալ է աստ, անկեալ առ ոտս սրբազնագոյն (անընթ.) և ասէր որ տէր ոչ ունիմ, վերն Ա ծ և աստ տէրդ ահա նորին պատմութիւն տեղապահութեան սարկաւագ Մկրտիչն ունի մանրամասնաբար պատմել սրբազնագունիդ, զի եթէ կամիս, ես աստէն քիրայով առաքեմ առ Աղայն, զի անդ պահպանել, հազիր անտէր կին է և երիտասարդ:

Նորընծայ տէր Ա ՝ծ տր աբեղայն յոյժ մերկ է զի ունի վերարկու եթէ կարելի է հնից և կամ նորից մին վերարկու առաքել ծածկելով զմերկութիւն իւր (անընթ.) և (անընթ.) հնոտի չարսավ եա լաճակ կնոջն այն»[22].

XVII – XVIII դդ. կայսրության մեջ նվազում են նախորդ դարերին հաճախակի հանդիպող տեղահանումները, բռնագաղթերը և գերիների համախումբ վերաբնակեցման երևույթները: Ստրկավաճառությունը, ինչպես և կուլ դասի էքստենսիվ համալրումը դառնում է գերիների իրացման գրեթե միակ նպատակը: Օսմանյան բանակում գերեվաճառությունը սկսվում էր գերիներ ձեռք բերելուց անմիջապես հետո, գոնե նշանակալի արշավանքների ժամանակ: Բոլոր դեպքերում գերիները բեռ էին, ընդ որում, արշավանքի և պատերազմի խստամբեր պայմաններում տեղափոխվող ամենախոցելի ապրանքը, ուստի հաղթողները շտապում էին ազատվել նրանցից՝ ծախելով բանակին հետևող գերեվաճառներին: 1647թ. Վրաստանում գերեվարած քրիստոնյաներին թուրքական ավարառու զորքը վաճառել էր մոտակա տրանզիտային հանգույցում: Այս առթիվ Էվլիյա Չելեբին գրում է. «Մեր բանակը ծայր աստիճան հարստացավ գերիներով և ավարով: Ցուրաքանչյուրի ուժերից վեր էր տանել ձեռք գցածը... Ավարը տարան Տրապիզոն և օգուտով վաճառեցին» : Իրեն՝ Էվլիյա Չելեբուն, զորահրամանատարներից մեկը նվիրում է մեկական ստրուկ և ստրկուհի[24]: Տոհմիկ գերին փրկագնվում էր ոչ տոհմիկ գերիներով, սրանք՝ տնային կենդանիներով, արհեստագործական արդյունքներով և այլն: Հայաստանում ոչ քիչ դեպքերում գերիներին փրկագնում էին գերությունից ազատ մնացած հարազատներն ու ազգականները, կրոնական հայրենասեր գործիչներն ու

---

[21] Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., Հ. Բ, Վենետիկ, 1841, էջ 273:

[22] Մեջբերվում է կրճատումներով. Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 245, վավ. 378:

[23] Օսար աղբյուրները... Էվլիյա Չելեբի, էջ 131:

[24] Նույն տեղում:

հարուստ խոջաները: XVI - XVIIդդ. հայ գերիների փրկագնման գործը ժողովրդից ու եկեղեցուց հավաքված միջոցներով, հանգանակություններով և այլն, ժամանակի կարևոր ազգային առաքինություններից մեկն էր համարվում: Գրականության մեջ գերիների փրկագնման բազմաթիվ վկայությունների ենք հանդիպում: Այսպես, 1534թ. թուրք-պարսկական բախումների ժամանակ գերի ընկած հայրենակիցներին փրկագնել էին խոջաները. «Խաւջայ Ղարէն ի Վանայ վաթսուն դերի գնեց (թուրքերից - Ա.Խ.) և ազատեց... Խաւջայ Սահակն ի զԱմիթ քաղաքն երեք հարիւր գերի գնեց և ազատեց տրօք և ողորմութեամբ», - հիշվում է մի ձեռագրում : Հայ կաթոլիկ հայր Ավգուստինոս Բաջենցը այս կերպ XVIIդ. սկզբին պարսիկներից ազատել է շատ գերիների՝ օգտվելով ֆրանսիական դեսպանի բարեհաճությունից. «Նորոյ չքոմն, - գրում է նա, - շատ հայի գերի (դերի - Ա.Խ.) ազատեցի ի անօրինաց ձեռնէ»[26]:

Հայ գերիներին ազատելու գործում մարդասիրական եռանդուն գործունեություն էր ծավալել նշանավոր Մովսես կաթողիկոսը: «Մովսէս կաթողիկոսն, - գրում է լավատեղյակ հեղինակը, - ՌՀԹ (1630) թվին... ամենայն դոլվաթավորաց հարկ դնէր, որ զգերեալսն ազատէին, զի ինքն ևս իւր ընչիցն տայր և ազատէր ամենեքումբք, երեք-չորս հազար գերի աւել Երէվան և ի Թարվէզ և այլ գիւղաքաղաքս ազատէին և առաքէին ի տեղիս իւրեանց»[27].

1638թ. ևս Արարատյան դաշտից և Երևանից գերվածներին զանգվածաբար փրկագնում են Էջմիածնի հոգևորականները. «Մինչ զամենեսեան ազատելով և ոչ թողլով մինչև մի»[28]: 1724թ. Էջմիածնի կաթողիկոսը փրկագնել էր 800 մարդ՝ Խոյի, Երևանի, Ուրմիայի, Թավրիզի և այլ վայրերի հայ գերյալներից[29]: Չփրկագնվեցին միայն ուրացողները և փրկագնելու կարիք էլ չկար, որովհետև սյունների մահմեդականություն ընդունելով, նրանք արդեն ազատվում էին ստրկությունից[30]: 1720-ական թթ. Արևելյան Հայաստանից բերված հայ գերիների թիվը Կոստանդնուպոլսի ստրկավաճառ շուկայում հասել էր այնպիսի մեծ չափերի, որ պատրիարք Հովհաննես Կոլոտը բողոքով դիմեց մեծ վեզիր Իբրահիմին՝ նրանց ազատելու համար:

---

[25] Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6332:

[26] Վարք Աւգոստինոս Բաջենց հայալատին եպիսկոպոսին (Բանասեր, Փարիզ, 1903, գիրք Գ, էջ 224):

[27] Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց: Վաղարշապատ, 1903, էջ 34:

[28] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 578: Այսուհանդերձ, գերիների մի մասին հնարավոր չեղավ փրկագնել «Եւ թէ գաղտ փախուցին ի հեռագոյն աշխարհ ուրեք, որպէս ի Կոստանդինուպօլիս և այլ գաւառս...» (նույն տեղում, էջ 580):

[29] Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 651 - 652:

[30] Օսմանցի սյունների մահմեդականները պիղծ էին համարում չիա պարսիկներին, որով և հիմնավորվում էին վերջիններիս գերեվարությունն ու սրանից բխող բոլոր հետևանքները: Պարսկաստանից և Արևելյան Հայաստանից գերված բնակչության թվաքանակին վերաբերող հայկական աղբյուրների տվյալները, հետևաբար, վերաբերում են, ըստ մեծի մասին, նաև պարսիկներին և այլ չիա մահմեդականներին: Իրենք՝ պարսիկները, ըստ հարկին, գերեվարում էին օսմանյան տարածքներում բնակվող թուրքերին և հայերին: 1730թ., երբ օսմանյան զորքերը հետ են քաշվում Թավրիզից, այստեղ մնացած հայերը գերի են ընկնում պարսիկներին. «Իսկ ղողորմելի ազգս հայոց, որ գնացեալ էին ի Թավրէզ վասն վաճառի և արուէստի, նոքա ազգն պարսից արարին գերի փոխանակ գերեացն իւրեանց», - ասված է մի ձեռագրում (Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 660):

Դրանից հետո վերջինս հրամայեց, «առ ամենայն գօրավարս բանակին՝ խափան դնել անիրաւութեանցն այնոցիկ»[31]:

Օսմանյան մայրաքաղաքը միջինարևելյան տարածաշրջանի ստրկավաճառ խոշոր կենտրոններից մեկն էր: Պետությունը ահագին եկամուտներ էր ստանում միայն գերիների վաճառքից, եթե մի կողմ թողնենք գերիների համակարգի առանձնահատուկ նշանակությունը այդ երկրի ռազմավարչական ու տնտեսական բնագավառներում: Էվլիյա Չելեբին այսպես է նկարագրում Կոստանդնուպոլսի գերիների շուկան. «Ստամբուլում, Թավուք բազար թաղամասում Էսիր բազարը (ստրուկների շուկա) անունով մի հայտնի տեղ կա, որի վերևի ու ներքևի հարկերում կան 300 խցիկներ: Երկաթյա փականքով դուռն առաջ նստած կառավարիչը տասանորդ է առնում վաճառված ստրուկների և ստրկուհիների համար: Ստրուկների առևտրով պարապող վաճառականների թիվը մոտ 2.000 է: Սրանք Կովկասից, Վրաստանից և Ղրիմից իբրև նվիրական պատերազմի ապրանք ստրուկներ են բերում և վաճառում»[32]:

Եթե, և թեկուզ սահմանափակվենք Էվլիյայի ժամանակով (XVII դ. 1-ին կես), միայն ստրկավաճառների թիվը հասնում էր շուրջ 2.000-ի, ապա պետք է նկատի ունենալ առհասարակ գերիների պատկառելի թիվը և նախորդ, և դրան հետևող ժամանակաշրջաններում: Պետությունը ևս շահագրգռված էր գերեվաճառության մեծ չափերով և բարձր գներով, որովհետև նրան էր հասնում վաճառված գերու արժեքի 1/10-ը: Թուրք ուղեգիրը թեև լռում է Բալկաններից բերված գերիների մասին, սակայն չպետք է կասկածել նրա բերած տվյալների ճշտությանը: Ի դեպ, գների մասին: Կոստանդնուպոլսի շուկայում ամենից թանկ արժեին գեղեցիկ երկսեռ դեռահասները: 1647թ. Կովկասում պատերազմող թուրք զորահրամանատար Սեյդի Ահմեդ փաշան գեղեցկուհի աղջիկներից ամեն մեկի համար վճարում է 1000 ղուրուշ՝ նվեր ուղարկելով սուլթան Իբրահիմին[33], երբ նույն այս «հաղթական արշավանքի» ժամանակ մեկ կոմն արժեր կես ղուրուշ: Դեռահաս գերիների գնի մասին որոշ պատկերացում է տալիս դրանից տասնամյակներ անց իրողությունը նկարագրող Ե. Քյոմյուրճյանը.

Եւ որք գեղով և կոկէ
Շատ գնոջ սակի պահեն զայն
Ցելս ի մաքսատունն յայնժամ
Զգինսն տան ւ՝ի տեարց առնուն զայն:
...Եօթն հարիւր ղրուշ է գինն
Հինգ հարիւր ոսկի տեսաք զայն[34]:

Ե.Քյոմյուրճյանը ուշադրություն է դարձնում Եսիր բազարում ռուս (նաև ուկրաինացու իմաստով) գերիների թշվառության վրա՝ «կիւրճի, չէրքէս, շատն է ռուս»[35]: Նա հետաքրքիր տեղեկություններ է հայտնում

---

[31] Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., հ. Ա, էջ 173:

[32] Օտար աղբյուրները... Էվլիյա Չելեբի, էջ 36:

[33] Նույն տեղում, էջ 130:

[34] Երեմիա Չէլէպիի Կ.Պոլսեցւոյ Պատմութիւն Ստամպօլայ (Հանդէս ամսօրեայ, 1910, № 3, էջ 90):

[35] Նույն տեղում: Ղրիմի թաթարները գերեվաճառ շուկաներ էին մատակարարում մեծ քանակությամբ ռուս և ուկրաինացի գերիների՝ ռուսական և ուկրաինական հողերի վրա իրենց հաճախակի ասպատակություններից հետո: «Թուրքիայի համար ուկրաինացի գերի

գերիների կացության, վաճառքի, նրանց սպասվող ճակատագրի մասին, որ որոշակի պատկերացումներ է տալիս գերիների դասը գոյացնող մի նշանակալի մասի վերաբերյալ: Գերիներ գնում էին տարբեր նպատակներով, ամենատարբեր բնագավառների համար՝ սկսած պարտադիր աշխատանքից և վերջացրած կրոնական կառույցները (ուլեմներ) համալրելու, արվեստի (պար, երաժշտություն և այլն) պահանջմունքներով, հարեմները ճոխացնելու ցանկությամբ և այլն:

XVIIդ. սկզբներին Կոստանդնուպոլսի Եսիր բազար այցելած Սիմեոն Լեհացին գրում է, որ այնտեղ «բազում քրիստոնէայք գերիք տզգ և ազգ: Որք ծեր են և պառաւք՝ նստել են: Իսկ զաղջկունս և մանկունս, զտղայս և զաղվորերես կանայս տէլլալնին (վաճառողները - Ա.Խ.) առեալ ի ձեռս զնոսա՝ շուր ածէին և ծախէին որպես զձի և զջորի»[36]:

Օսմանյան կայսրության մեջ գերիների (ստրուկների) կարգավիճակի վերաբերյալ ուշագրավ որոշ տվյալներ են տալիս Սելիմ I-ի (1512 - 1520) օրենքները: Պատկանելով տիրոջը՝ գերին, իրավական տեսակետից, համարվում էր ոչ լիարժեք սուբյեկտ: Ստրուկի մեղանչումներն օրենքի առջև չեն համարվում լիարժեք անձի մեղանչումներ, ուստի պատժվում են շատ ավելի մեղմ չափերով: «Եթե չնացել են ստրուկը և ստրկուհին, թող նրանցից գանձվի (չափով տուգանք) ազատ (տղամարդուց) և ազատ (կնոջից) գանձվող տուգանքի կեսը»[37], - ասված է հիշյալ օրենքներից մեկում: Եվ ընդհակառակն, երբ գերին հանդես է գալիս որպես ազատի հանցագործության օբյեկտ, չի զանազանվում սովորական ապրանքից կամ իրից, և այս դեպքում նրա հանդեպ ոտնձգություն կատարողը պատժվում է ճիշտ նույն չափով, ինչ չափով պատիժ է նախատեսվում ուրիշի ունեցվածքի նկատմամբ ոտնձգություն կատարողին: «Նրան, - ասված է Սելիմի մի այլ օրենքում, - ով առևանգել է գերուն, տարել ստրուկին, ստրկուհուն կամ տղային, ով մտել է կրպակ, սողոսկել տուն և քանիցս բռնվել գողության մեջ, թող կախեն»[38]:

Որ գերու տեղը օսմանյան հասարակության մեջ դիտվում է բացառապես գույքային հարաբերությունների տեսակետից, իրև սեփականություն, ակնհայտ է նաև հետևյալ օրենքից. «Եթե տղամարդը կապվի իր կնոջ, մոր կամ մերձավորներից մեկի ստրկուհու հետ, ապա կոդին, պատժելով նրան, թող ճիպոտի ամեն մի հարվածի հետ վերցնի 1 աքչե տուգանք»[39]: Գերին այստեղ դիտարկվում է ոչ թե սեփական իրավունքների (որոնցից նա կատարելապես զուրկ էր), այլ հանցավոր արարք կատարողի՝ ուրիշի իրավունքների նկատմամբ ոտնձգություն կատարելու, ուրիշի (կնոջ, մոր կամ մերձավորներից մեկի) գույքն ապօրինի տնօրինելու տեսակետից: Եվ ընդհակառակն, գերու տերը, թվում է, անսահման իշխանություն ունի նրա անձը տնօրինելու հարցում: Կարծում ենք, հետևյալ նորմում արտացոլված է

ստրուկների գլխավոր մատակարարը մնում է Ղրիմը», - գրում է Ա.Կրիմսկին (А.Крымский. История Турции и ее литературы от расцвета до начала упадка. М., 1910, с. 24): Ա.Դ.Նովիչևը գրում է, որ Կ.Գոլիսը Թուրքերի կողմից գրավվելուց հետո ամեն օր նրա նավահանգիստն էին մտնում 3 - 4 նավ ռուս գերիներով բեռնված (А.Д.Новичев, նշվ. աշխ., էջ 70):

Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 18:

[37] Книга законов султана Селима I. (Публикация текста, перевод, терминолог. коммент. и предисловие А.С.Тверитиновой). М., 1969, с. 32.

[38] Նույն տեղում, էջ 36:

[39] Նույն տեղում, էջ 33:

գերու, որպես գույքի նկատմամբ սեփականատիրական իրավունքի սկզբունքը: Հակառակ վերը նշված նորմի, այստեղ ասված է. «Եթե [որևէ մեկի] որդին կապված լինի իր (հոր - Ա.Խ.) ստրկուհու կամ... հետ, ապա դրա համար ոչինչ չի արվում, թող չխառնվեն»[40]: Ուրեմն, հորը պատկանող ստրկուհին օրենքի տեսակետից պատկանում է նաև որդուն և կամ վերջինս օգտվում է հոր սեփականատիրական իրավունքից, ուստի նույն սեփականության տնօրինումը տվյալ դեպքում հանցանք չի համարվում:

Սելիմի օրենքներում ստրուկի կարգավիճակին վերաբերող նշված նորմերը սպառիչ պատասխան չեն տալիս նրա կյանքը տնօրինելու ստրկատիրոջ իրավունքների ամբողջ ծավալի մասին (օրինակ, նրան սպանելու կամ մահվան պատճառ դառնալու դեպքում անպատժելիության իրավունքի մասին): Եզրակները, սակայն, հիմք են տալիս եզրակացնելու, որ Օսմանյան Թուրքիայում ստրուկները համարվել են տիրոջ կատարյալ սեփականությունը, զուրկ են եղել ամեն մի իրավունքից: Նրանց կարգավիճակը բնութագրելիս պետք է ելնել զուտ օսմանյան գույքային-սեփականատիրական հարաբերությունների բնույթից:

Գերիների նկատմամբ սեփականատիրական իրավունքի, փախած ստրուկներին տերերին վերադարձնելու կամ վաճառքի, նրանց պատիժների և այլ հարցերին բավական ուշադրություն է դարձված Սուլեյման Կանունիի (1520 - 1566) օրենքներում: Նորմերից մեկում ասված է, որ բռնվելու դեպքում փախած ստրուկները, ըստ սովորույթի, պահվում են 3 ամիս, մինչև տիրոջ հնարավոր հայտնվելը: Հակառակ դեպքում, նրանք վաճառվում էին չուկայում կադիի միջնորդությամբ: Սակայն, անգամ վաճառքից հետո հայտնված տերերը անհապաղ ստանում էին իրենց ստրուկների վաճառքից գոյացած գումարը[41]: 1528թ. մի օրենքով թիմարներում գրանցված փախստական ստրուկները պատկանում էին թիմարի տիրոջը, իսկ գրանցում չլինելու դեպքում՝ սանջակբեյին[42]: Առաջին դեպքում նախապատվությունը տրվում էր սիփահիի սեփականատիրական, մյուս դեպքում՝ սանջակբեյի վարչական իրավունքին:

Հանցավոր ստրուկներին տրվող պատիժների առթիվ Գ.Այվազովսկին նկատում է, որ «Զգերեաց տոյժս կիսով չափ հատուցանել պարտին տեարքն նոցա»[43], իրողություն, որ ցույց է տալիս ստրկի վարքագծի համար տիրոջ պարտավորությունը հանրային իրավունքի հանդեպ: Նույն նորմը, ինչպես տեսանք, գործում էր դեռևս Սելիմի օրենքներում:

Օսմանյան վավերագրերի մի այլ խումբ տեղեկություններ է տալիս գերիների առքուվաճառքի, նրանց տնօրինելու իրավունքի, այս բնագավառում պետության դերի մասին: 1559թ. մի վավերագիր վկայում է, որ ոչ մահմեդականները իրավունք չունեն գերի պահելու, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ այլուր: Հրաման է տրվում կադիին՝ առանձին դավթարներում ցուցակագրել ոչ մահմեդականների մոտ գտնվող գերիներին, տիրոջ

---

[40] Նույն տեղում:
[41] Аграрный строй... с. 27 – 28.
[42] Նույն տեղում, էջ 51 - 52:
[43] Գ. Այվազովսկի, Նշվ. աշխ., հ. Բ, էջ 400:

անուններն ու գերիներ գնելու տարեթվերը, նրանց թաղամասերը և այլն[44]: Ցուցակագրումն արվում էր գերիներին ոչ մահմեդական տերերից խլելու և նրանց վերստին, միայն մահմեդականներին վաճառելու կամ նրանց պետության վերահսկողության ներքո գտնվող հաստատություններ տեղափոխելու համար: Կոստանդնուպոլսի կադիին հղված մի այլ հրամանում (1560) ասված է, որ քաղաքի հրեաների և քրիստոնյաների մոտ են գտնվում 32 գերիներ և 51 ծեր կանայք: Հրամայվում է, որ նրանց մոտ այսուհետև «գերիները ծառայություն չպետք է անեն, ազատ արձակված գերիները հանձնվելու են մահմեդականներին, իսկ գերի համարվողները վաճառվելու են նույնպես մահմեդականներին»[45]: Ոչ մահմեդականները իրավունք չունեին նաև սուրբակ (ազատագրված գերի) պահելու[46], քանի որ նրանց՝ գերի գնելն արդեն իսկ օրինական չէր, օրինական չէր կարող համարվել, հետևաբար, նրանց վճռով գերուն ազատություն տալը: Ուշագրավ է այս վերջին վավերագրի պատվերը «Իսկ եթե մի քանիսի (ոչ մահմեդականների - Ա.Խ.) մոտ արտոնագրեր հայտնաբերվեն, ապա բոլորի ձեռքից հավաքիր և հանձնիր իմ կայսերական սեմին»[47]: Պետք է եզրակացնել, որ Սուլեյմանի ժամանակ, նախքան այս հրամանագիրը, ոչ մահմեդականներն օգտվել են համապատասխան արտոնագրերից, ուրեմն և գերիներ են գնել օրինական հիմունքներով: Այս սկզբունքը (արտոնագրեր չնորհելու) Սուլեյմանը համարել է ոչ օրինական:

Վաճառված գերու կարգավիճակն ինքնին ենթադրում էր, որ նա պետք է ընդուներ նույն կրոնը, ինչը դավանում էր իր տերը: Մուրադ III-ի ժամանակի մի վավերագրում (1575) այս առթիվ ասված է, որ հրեաները և քրիստոնյաները «Ձեռք բերած գերիներին հրեա և քրիստոնյա դարձնելով... գործել են չարիաթի օրենքներին հակառակ»[48]: Ուրեմն, գերի կարող էր ունենալ միայն մահմեդականը: Նույն կերպ, արգելվում էր, որ հրեաներն ու քրիստոնյաները զբաղվեն գերեվաճառությամբ:

Օսմանյան Թուրքիայում ամենազոր կաշառքի կամ սուլթանների փոփոխամտության պայմաններում հազիվ թե նշված արգելքները անվերապահորեն պահպանվեին: Դրանք պարբերաբար խախտվում էին, մինչև արգելող սուլթանական նոր հրամանների հրապարակումը: Հակառակ դեպքում, 1559 - 1560թթ. Սուլեյման Կանունիի ֆերմաններում հայտարարված արգելքները չէին կրկնվի 1575թ. նույն բովանդակության՝ Մուրադ III-ի ֆերմանում: Խոսքը վերաբերում է հրեաներին և քրիստոնյաներին գերի վաճառելուն, ինչպես և նրանց կողմից գերիների վաճառքն արգելելուն[49]: Այս իրողությունը մոտավորապես հիշեցնում է Կոստանդնուպոլսում գինու վաճառքն արգելելու, ինչպես և հրեաների ու քրիստոնյաների՝ մահմեդականներից շատ ավելի զուսպ հագնվելու կամ նրանց ստորադաս կարգավիճակն ընդգծող դույներով զգեստներ հագնելու վերաբերյալ սուլթանների չարունակական ֆերմանները, որոնք մերթ անտեսվում, մերթ նորոգվում էին XVII - XVIII դդ. ընթացքում:

---

[44] Ավ. Փափազյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16 - 19-րդ դարեր), Ե., 1999, էջ 207:
[45] Նույն տեղում, էջ 208:
[46] Նույն տեղում:
[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում, էջ 220 - 221:
[49] Նույն տեղում:

Օսմանյան կայսրության մեջ գերիների համակարգի սնուցիչ ավանդույթն ու բաղկացուցիչ մասն էր կազմում դեվշիրմեն (մանկահավաք)[50]: Այն կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների իրավազրկության ամենաակնառու և բարբարոսական դրսևորումն էր, որի միջոցով պետությունը ռազմավարչական և տնտեսական բնագավառները անընդմեջ լրացնում էր մարդկային ռեսուրսներով: Հայտնի է, որ օսմանյան Թուրքիայում հասարակությունը բաժանվում էր երկու մեծ խմբերի. ասկերիներ՝ ռազմաբյուրոկրատական և վարչական կառույցներում տեղ զբաղեցնող անձինք, որոնք հարկ չէին վճարում և ծառայության դիմաց վարձատրվում էին պետության կողմից), և ռայաներ (հարկատուներ)[51]: Որպես կանոն և սակավ բացառություններով, ասկերիների դասը կազմված էր մահմեդականներից: Ոչ մահմեդականները ասկերիների դաս կարող էին անցնել մահմեդականություն ընդունելուց հետո: Այսպիսով, դեվշիրմեն հանդես էր գալիս որպես միջոց՝ մահմեդականացած երիտասարդությամբ լրացնելու ասկերիների դասը: Իրենք՝ ոչ մահմեդական ժողովուրդները, համարվում էին ռայա՝ կրոնական և սրանից ածանցվող դասային պատնեշներով սահմանազատվելով տիրապետող մահմեդականներից:

Հայկական շրջաններում մանկահավաքներ են կատարվել, Մեհմեդից հետո, 1531, 1536, 1543, 1547, 1550, 1622, 1637թթ. և այլն[52]:

Դեվշիրմեով հավաքված երիտասարդության ողջ խմբաքանակը ուղարկվում էր զորանոցներ: Այստեղ նրանք պետք է ընդգրկվեին ռազմական ուսուցման համակարգի մեջ՝ հետագայում ենիչերիների զորամասերում ծառայելու նպատակով: Հավաքվածների մի մասը հարկադիր աշխատանքի էր վերցվում սուլթանների, փաշաների պալատներում և այլ բարձրաստիճան անձանց տներում: Սուլթանի պալատում «իչ օղլանները»՝ պալատի ամբողջ կարգուկանոնը և կենսագործունեությունը ապահովող երիտասարդները, անցնում էին ծառայության ամբողջ փուլերը: 1470-ական թթ. Մեհմեդի պալատում ապրած Գիա Մարիո Անյոլելլոն, որը ծառայել է իբրև թարգմանիչ, բավական հանգամանորեն նկարագրում է «իչ օղլաններին», որպես «քրիստոնյաների զավակների, որոնց մի մասը գերի է ընկել օտար երկրներում՝ արշավանքի ժամանակ, իսկ մյուս մասը ձեռք է բերվել իր (սուլթանի - Ա.Խ.) սեփական հպատակներից... Ըստ ցուցաբերած վարքագծի, նրանք ծառայությունների էին նշանակվում թագավորական պալատում՝ լինելով սուլթանի աչքերի առջև և հետո ծառայելով նրան մի որոշ ժամանակ, և երբ գլխավորների կարծիքով, նա արդեն արժանացել էր իրենց վստահությանը, ուղարկվում էր պալատից դուրս՝ համապատասխան

---

[50] Դեվշիրմեի՝ իբրև ոչ մահմեդական ժողովուրդների հանդեպ օսմանյան պետության կիրառած սոցիալական ու ազգային ճնշման, նրանց մահմեդականացնելուն ուղղված քաղաքականության հմտալի վերլուծությունը տե՛ս Ս.Կ.Զուլալյան, «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների (Պատմա-բանասիրական հանդես, 1959, № 2 - 3, էջ 247 - 256): Սույն հոդվածում դեվշիրմեն մեզ առավել հետաքրքրում է իբրև գերության համակարգի բաղկացուցիչ մաս և իբրև երևույթ, որի գոյությունը և, մասնավորապես, անկումը, կապվում են Օսմանյան Թուրքիայում ռազմաքաղաքական և սեփականատիրական հարաբերությունների որակական փոփոխությունների հետ:

[51] Metim Kunt, Transformation of Zimmi into Askeri.In: Christians and Jews into the Ottoman Empire, vol. I, New York-London, 1982, p. 58.

[52] Մ.Կ.Զուլալյան, «Դեվշիրմեն»..., էջ 250:

չափի ոռճիկ ստանալով... Այսպիսով, սուլթանին ծառայող գլխավորների, նավապետների և նշանավոր մարդկանց մեծագույն մասը իրենց դաստիարակությունը ստանում էին սուլթանի պալատում... և այն սակավաթիվները, որոնք չէին կատարում իրենց պարտականությունները, այնպես, ինչպես որ պարգևատրվում էին իրենց տերերի կողմից ամենափոքր ծառայության դիմաց, այնպես էլ պատժվում էին ամենափոքր զանցանքի համար»[53].

Devşirmeի տղաների մի այլ խումբն օգտագործվում էր թերսհանեում (թիարան), նավատորմի վրա, իբրև աշխատուժ օգտագործվում գյուղատնտեսական և արհեստագործական արտադրության մեջ, հանքային սրդյունահանման ոլորտում, մշակութային-կրթական հաստատություններում (իմարեթներ) և այլն: Մասնավոր՝ ընտանիքներում պահվող տղաների կարգավիճակը ամենևին չէր տարբերվում մահմեդականացված ռազմագերիներից, որոնց կյանքն ու աշխատանքը ամբողջովին տնօրինում էին տերերը:

Օսմանյան բանակը ներկայացնում էր ստրկության համակարգի (կուլլուք) մի բազմաշերտ պատկեր: Ֆերիդուն բեյի (XVIդ. II կես) «Սուլթանների գրություններից» երևում է, որ բանակում ծառայում էր կուլ արհեստավորների մի ամբողջ բազմություն՝ 3217 թամբագործ, 2. 221 խալաթ կարողներ, 735 այլ արհեստավորներ[54].

Ռայա բնակչությունից դեվշիրմեով հավաքագրում էին 14 - 20 տարեկան պատանիների: XVIդ. մի ֆերմանում նշված է ընտրության կարգը՝ 40 ընտանիքից մեկ պատանի: 1573թ. մի այլ ֆերմանում նշվում է հավաքագրման չափը՝ 100-ական տղաներ Կարամանի և Զուլքադերիեի վիլայեթների սանջակներից[55]:

Արդեն նվաճված բնակավայրերում պատանիների և աղջիկների քանակը որոշվում էր սուլթանի կամ բանակի գլխավորի ցանկությամբ: Այսպես, Նովո Բրդո քաղաքը գրավելիս Մեհմեդ II-ը իսկույն ձեռնամուխ եղավ դեռահասների հավաքագրմանը, թեև նախապես բնակիչներին խոստացել էր, որ սրանց անձնատուր լինելու դեպքում ձեռք չի տա կանանց և դեռահասներին: Թուրքերը հրամայում են բնակիչներին՝ դուրս գալ քաղաքի դարպասներից: «Եվ այսպես, նրանք դուրս եկան մեկը մյուսի հետևից: Եվ սուլթանը, կանգնելով դարպասների առաջ, ջոկում և շարում էր տղաներին մեկ, իսկ կանանց՝ մյուս կողմում, իսկ նրանց, ովքեր ամենագլխավորներն էին, հրամայեց սպանել»[56], - գրում է ականատեսը:

Նոր նվաճված խաղաղ բնակչությունը դիտվում էր իբրև ռազմագերի, մինչդեռ, մանկահավաքի ժամանակ սուլթանի հպատակներին ինչ-ինչ ողորմածություն էր ցուցաբերվում, օրինակ, ցուցակագրում էին բազմազավակ կամ արու շատ զավակներ ունեցող ընտանիքի տղաներին կամ որոշակի թվաքանակով տղաների[57] (որ չարաշահումների պատճառ էր դառնում պաշտոնյաների համար՝ այդ թվաքանակը չապահովելու դեպքում): Որոշ վայրերի ռայաները առհասարակ ազատ էին մանկահավաքից (ինչպես Կոստանդնուպոլիսը) կամ ազատ լինելու արտոնություններ ունեին: Ի դեպ, այդպիսի արտոնությունները կարող էին վերացվել դարձյալ սուլթանի

---

[53] A. Wheatscroft, The Ottomans. London, 1993, p. 33.

[54] Թուրքական աղբյուրները... Հ. Բ, էջ 238:

[55] Ավ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 166, 170:

[56] Записки янычара. Написаны Константином Михайловичем из Островицы (Введ., перев. и коммент. А.И.Рогова). М., 1978, с. 74.

[57] Ավ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 166:

ֆերմանով ռազմական կամ այլ պայմանների բերումով: Այսպես, 1621թ. հունվարի մի ֆերմանով դեվշիրմեից և այլ հարկերից ազատ մնալու արտոնություն ունեցող արդյունահանող և վակուֆային գյուղերի ռայաները զրկվում էին իրենց արտոնություններից և դեվշիրմեի էին ենթարկվում «ըստ գոյություն ունեցող կարգի» [58]: Պատճառը, ակնհայտորեն, այն էր, որ Օսմանյան Թուրքիան պատերազմի մեջ էր Լեհաստանի հետ (1620 - 1621), ուստի ենիչերիական զորատեսակն անհրաժեշտ էր լրացնել նոր ռեզերվով:

Մանկահավաքների առթիվ ֆերմաններում նշվում է տղաներին մայրաքաղաք հասցնելու խիստ կանոնակարգը՝ նրանց փախչելու ամեն մի հնարավորությունից զրկելու միջոցները (մայրաքաղաքից ուղարկված հատուկ պաշտոնյային կադիները պետք է ցուցաբերեին օգնություն՝ ըստ ամենայնի, այդ թվում հատուկ ուղեկից ջոկատների կազմավորումը տղաներին հսկելու համար, կրկնակի մատյաններում տղաների անունները գրանցելը և այլն): Որոշ դեպքերում հավաքագրվածներից ոմանց հաջողվում էր կաշառքի և այլ միջոցներով խուսափել հավաքից, նույնիսկ այն ժամանակ, երբ Կոստանդնուպոլսում արդեն ընդունել էին մահմեդականություն [59]:

Ենիչերիական զորամասերում «աջեմի տղաները» ապրում էին սահմանված կանոնադրությամբ: Այստեղից արհեստների կամ գյուղատնտեսական աշխատանքների հմտություն ունեցողները ուղարկվում էին սուլթանական պալատի պարտեզներ, նավաշինարան, մայրաքաղաքի կենցաղային սպասարկման նպատակներով և այլն: Մի ֆերմանով (1576թ.) հրամայվում է 20 պատանիներ ուղարկել մետաքսագործարան, իբրև աշխատողներ, իսկ նույն թվականի մի այլ ֆերմանով դեվշիրմեի տղաներից 25 հոգի տրամադրվում են կայսերական պալատի ջրամատակարարմանը սպասարկելուն [60]: Մ.Մեյերը նկատում է, որ նրանք ազատ մարդիկ չէին, իրավունք չունեին հեռանալ արհեստանոցից կամ հրաժարվել աշխատանքից, և որ նրանց մեջ կային բավական թվով ստրուկներ և արհեստավորներ [61]: Ավելացնենք, որ դեվշիրմեով հավաքված արհեստավորները ևս, ինչպես ենիչերիները, համարվում էին սուլթանի «կուլերը» և ազատ չէին կարող լինել իրենց գործունեության բոլոր բնագավառներում:

XVI դ. վերջին և XVII դ. Օսմանյան կայսրության ռազմատնտեսական հզորության անկումը մի հայտնի չափով պայմանավորեց գերության համակարգի քայքայման գործընթացը: Թիմարի քայքայումը իր հետ բերեց անխուսափելի հետևանքներ՝ գյուղատնտեսական արտադրության անկում, գյուղացիության զանգվածային աղքատացում, որ նրա անզուսպ շահագործման հետևանքն էր: Մեր հիշատակած Կոչի բեյը Օսմանյան կայսրության տնտեսական անկման դրսևորումների մեջ առանձնացնում էր ռայայի հարստահարման չափերի ուժեղացումը և կուլ դասի բազմացումը [62]: Կուլերի բազմացումը, ի դեպ, ի հայտ էր գալիս նաև ենիչերիների

---

[58] Նույն տեղում, էջ 175:

[59] Նույն տեղում, էջ 169, 171: Այսուհանդերձ, մանկահավաքից փախչելով աղատվելը գրեթե անհնարելի մի բան էր: Որպես կանոն, նրանց բռնում էին: Կոնստանտին Միխայլովիչը, որը գերի ընկնելով ենիչերի էր դարձել, պատմում է, թե ինչպես էր ձախողվել 20 հոգու հետ միասին փախչելու փորձ անելիս (Записки янычара, с. 74).

[60] Ավ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 172:

[61] М.С.Мейер, Османская империя в XVIII веке. М., 1991, с. 47.

[62] Թուրքական աղբյուրները... հ. Բ, էջ 230:

թվաքանակի աճով, որ սկսվել էր XVIդ. վերջին քառորդին[63]: XVII - XVIIIդդ. արդեն, իրենց բացառիկ դիրքի և ազդեցության շնորհիվ ենիչերիները դառնում են կայսրության քաղաքական կյանքն ապակայունացնող գործոն, և այս իրողությունն արտացոլում էր օսմանյան Թուրքիայի տնտեսության և քաղաքական համակարգի որակական փոփոխությունները նախապատրաստող խոր ճգնաժամը: Քաղաքներում գործի դնելով իրենց ուժն ու հեղինակությունը և մասնավորապես, օգտվելով ապահարկ դասի իրենց արտոնություններից՝ ենիչերիները ներթափանցեցին արհեստագործական-առևտրական էսնաֆի շարքերը[64], խորացնելով այստեղ գործառող մահմեդականների և ոչ մահմեդականների կրոնական անջրպետը: Ենիչերիներին և սիփահիներին թույլատրվել էր մասնակցել, հատկապես ջալալիների ապստամբության ժամանակներից, հարկահավաքման, քաղաքները գյուղատնտեսական պարենով ապահովելու գործին, որ զորացնում էր նրանց նաև տնտեսապես[65]: Սուլթան Մուրադ IV-ի ժամանակ, ինչպես գրում էր Գր.Դարանաղցին, սիփահիները (կարծում ենք, նաև ենիչերիները) օգտվում էին երկրի խառնակ վիճակից՝ ռայայի հարկը ծանրացնելու համար. «Եւ սկսան խնդրել ի թագաւորէն մեծամեծ հարկապահանջութիւնս առնել զաշխարհն քրիստոնէից, որ դեռ երեք ամիս չէր եղել մին խարաճին թասքիրէքն, նա՛ կրկին հաւաքելով ի սպահի զօրացն՝ ի մեծ դիւանին և սկսան մեծաւ հարկին և բռնութեամբ խնդրել հրամանագիրս ի թագաւորէն և ի վազիրէն»[66]:

XVIIդ. 2-րդ կեսին ֆրանսիացի Սրշել Ֆերբյուրը արձանագրում էր ենիչերիների զորատեսակները այլակերպող երևույթները՝ նշելով, որ նրանք բոլորն էլ, հակառակ հին ավանդույթների, ամուսնացած են և զբաղվում են արհեստներով ու առևտրով, խուսափում են արշավանքներից՝ թաքնվելով կամ կաշառքի միջոցով[67]: Այս երևույթը շարունակվում և լայն ծավալներ էր ստանում մեկ հարյուրամյակ անց: Հակոբ Տիվրիկցին գրում էր, որ 1774թ.

---

[63] Տարբեր հեղինակների թվական տվյալները, թեև տարբեր, վկայում են այդ աճի կորագծի մասին: Ըստ Ա.Ալպոյաճյանի, Ֆաթիհի ժամանակ 12.000-ի չափ ենիչերիների թիվը Սուլեյման Կանունիի ժամանակ հասել էր 20.000-ի, 16-րդ դ. վերջին քառորդին՝ 60.000-ի, Մեհմեդ IV-ի ժամանակ՝ (1648 - 1687) 200.000-ի (Ա.Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ, Գ, Կահիրե, 1961, էջ 45): Այլ հեղինակների տվյալներով, Սուլեյման I-ի ժամանակվա 12.000-ից այդ թիվը հասել էր, հարյուր տարի անց, 46.000-ի (W.S.Davis, A short History of the Near East. New York, 1949, p. 257) կամ 1591թ. ենիչերիների թիվը կազմում էր 50.000 մարդ. միայն Ավստրիայի հետ պատերազմի ժամանակ (1687 - 1698) կամավոր ենիչերի էր գրվել 30.000 մարդ (A.Wheatcroft, նշվ. աշխ., էջ 89 - 90), թեև հենց այս ժամանակաշրջանում էր, որ երրորդ Քյոփրյուլու վեզիրը՝ Ֆազլը Մուստաֆա փաշան փորձել էր կրճատել ենիչերիական զորատեսակը՝ հասցնելով 20.000 մարդու և այսպիսով ապահովել մնացյալների կանոնավոր ռոճիկը (Çabuk Vahid, Koprululer. Istanbul, 1988, s. 166).

[64] Н.А.Иванов, Арабо-османский цех в XVI – XVII вв. В кн.: Османская империя. Государственная власть и социально-политическая структура. М., 1990, с. 198.

[65] М.С.Мейер, նշվ. աշխ., էջ 108 - 109:

[66] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի..., էջ 556:

[67] М.С.Мейер.Новые явления в социально-политической жизни Османской империи во второй половине XVII – XVIII вв. В кн.: Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 171.

ռուսների հետ սկսված պատերազմից խուսափելու համար «արուեստագործութիւն լինէին ամենայն, որ ոչ երթային սէֆէր[68] (պատերազմ - Ա.Ղ.)»: Գյուղերը կեղեքելու և ծանր հարկեր սահմանելու իրողությունը, որ նշվեց վերը, ենիչերիների գլխավորներին հնարավորություն տվեց ուլեմների և առևտրաարհեստագործական կորպորացիաների վերնախավի հետ միասին վերածվելու խոշոր հողատերերի, գավառական ամենաազդեցիկ խավի[69]:

Ենիչերիների՝ էսնաֆի մեջ ներթափանցելուն զուգընթաց, կատարվում էր նաև հակադարձ շարժում, որը փաստորեն միևնույն երևույթի դրսևորման մի այլ ձևն էր և ամրողջացնում էր էսնաֆ-ենիչերի փոխհարաբերությունները: Կամավոր ենիչերի էին գրվում, իրենց հերթին, արհեստավորները, որ նրանց տալիս էր հարկ չվճարելու և սեփական բարեկեցությունը ապահովելու երաշխիքներ[70]:

Արհեստավորների և բնակչության այլ խավերի՝ ենիչերիական զորատեսակներ մուտք գործելը թուլացնում և ապա ավելորդ էր դարձնում մանկահավաքների անհրաժեշտությունը գոնե ռազմական տեսակետից: 1637թ. վերջին դեվշիրմեից հետո թուրքական աղբյուրները թեև լռում են այդ մասին, սակայն, ինչպես նշում է Մ.Զուլալյանը, այդ դեռևս չի նշանակում, որ դրանից հետո այդ ինստիտուտը վերացել է: Նա կարծում է, որ մանկահավաքներ կարող էին լինել ոչ միայն այդ ժամանակից հետո, այլև, նվազ չափերով, մինչև XVIII դարը[71]:

Միաժամանակ, մանկահավաքները միայն ռազմական նշանակություն չունեին, այլև ավանդական միջոց էին՝ թուլացնելու ոչ մահմեդական ազգաբնակչության ֆիզիկական ու մտավոր ներուժը և զորացնելու օսմանյան պետության բյուրոկրատական-վարչական և ինտելեկտուալ հնարավորությունները: Բռնության այս քաղաքականությունը ոչ մահմեդականների հանդեպ հարատևում էր սովորության ուժով, և այս իմաստով միանգամայն հիմնավոր է թվում մանկահավաքները մինչև XVIII դարը շարունակվելու վերաբերյալ վերոհիշյալ տեսակետը[72]:

Այսպիսով, թիմարի քայքայումը, գյուղացիության կեղեքումների ուժեղացումը և սեփականատիրական այլ ձևերի ձևախախտումը խորքային լուրջ փոփոխություններ էին մտցնելու օսմանյան ավանդական տնտեսության և ամբողջ հասարակության մեջ: Դասային համընդհանուր քայքայումը փլուզեց էսնաֆի և ենիչերիական դասերի ավատատիրական ինքնաբավ մեկուսացման սահմանները՝ հասցնելով վերջինիս այլասերմանը: Ենիչերիական զորատեսակի այդ այլասերումը, սովորական ուղիներով և օսմանցի ազգաբնակչությունից այդ զորատեսակը համալրելը, հիմնականում վերացրին մանկահավաքների անհրաժեշտությունը: Պատահական չէ, որ այս գործընթացի հետագա խորացումը XVIIդ. վերջին համընկնում է մանկահավաքների վերացմանը, թեև դրան վերաբերող օրենքը վերացվել է

---

[68] Մանր ժամանակագրություններ, XIII - XVIIդդ., հ. 2 (կազմ. Վ.Հակոբյան), Ե., 1956, էջ 457:

[69] H.Inalcik, The Ottoman Empire, 1300 – 1600. New York – Washington, 1973. p. 51.

[70] M.C.Meüep. նշվ. աշխ., էջ 108 – 109.

[71] Մ.Կ.Զուլալյան, «Դեվշիրմե»-ն (մանկահավաքը)... (Պատմա-բանասիրական հանդես, 1959, № 2 – 3, էջ 255):

[72] Նույն տեղում:

ավելի ուշ՝ 1750թ.[73]: Գերեվաճառ չուկան փակվել է Հ՛լ ավելի ուշ, Աբդուլ Մեջիդի ֆերմանով[74]: Սակայն, դրանից հետո էլ գերեվարությունները և ստրկավաճառությունը շարունակում էին հարատևել[75], իբրև օսմանյան վարչական, ռազմական և հողատիրական վերնախավի եկամուտների աղբյուր և ավանդականորեն ընկալվող կենցաղի ու հոգեբանության հարատևող գործոն:

СИСТЕМА РАБСТВА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (XV – XVIIIвв.)

А.А.ХАРАТЯН

Резюме

Система рабства в Османской империи формировалась за счет военнопленных и населения побежденных стран на территории империи (немусульманских народов – славяне, греки, армяне и т.п.). Военнопленные частично превращались в янычаров, а большая их часть продавалась или пополняла административно-бюрократические, религиозные структуры, ремесленническую, сельскохозяйственную рабочую силу, вовлекалась в сферу обслуживания султанского дворца, верхушки и других особ. Насильственный сбор подростков – девширме, как позорная форма национального и социального угнетения немусульманских народов империи – также преследовал цель пополнения янычарского корпуса (капукулу). Со второй половины XVI века разложение тимара как формы собственности внесло серьезные изменения в традиционную социально-экономическую жизнь страны. Трансформация общей структуры общества привела к разложению сословной самодостаточности ремесленничества и янычарского корпуса. Пополнение последнего за счет самого мусульманского населения фактически устранило необходимость девширме. Углубление этого процесса в конце XVII века совпало с ликвидацией института девширме.

---

[73] *Ավ. Փափազյան. Նշվ. աշխ., էջ 224:*

[74] *Նույն տեղում:*

[75] *Հրապարակվելով ստրկության դեմ եվրոպական քաղաքականության ներգործության, և մասնավորապես, Ռուսաստանի հարուցած արգելքի պայմաններում, այդ ֆերմանը, այդուհանդերձ, տասնամյակներ շարունակ պետք է պահպաներ իր զուտ ձևական բնույթը: Օսմանյան Թուրքիայում գերեվաճառությունը շարունակվում էր նաև 1850 - 1870-ական թթ., Ղրիմի պատերազմի ժամանակ և դեռ դրանից հետո էլ, մինչև դարավերջ: Խայտառակ այդ առևտուրը կատարվում էր հիմնականում գաղտնի և մաքսանենգ ուղիներով՝ սուլթանական պալատին, հարեմներին և բարձրաստիճան անձանց մատակարարելով գեղեցիկ դեռահասներ, տնային ծառայողներ և այլն (տե՛ս Վ.Գ.Ղլեչյան, Ստրկավաճառությունը Օսմանյան կայսրությունում, 19-րդ դարում («Արևելագիտության հարցեր», միջբուհական ժողովածու, պր. 3 - 4, Ե., 1987, էջ 107 - 120): Այս ուշագրավ հոդվածում հիմնահարցի հետազոտության շրջանակները ընդարձակված են ժամանակագրական առումով՝ ընդգրկելով XIX դարը):*